Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն ստանալու նպատակով նախատեսվում է էլեկտրաէներգետիկական համակարգի 30ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող արտադրող և ծառայություններ մատուցող ընկերությունների, ինչպես նաև ջրային ոլորտից՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի համար սահմանել հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձևեր:

Նախատեսվում է էլեկտրական էներգիայի տարբեր լարման սակագների միջև ծախսերի և ներդրումների բաշխման սկզբունքների, սպառողական առանձին խմբերի համար երկդրույք սակագնային համակարգի կիրառման հարցի ուսումնասիրություն և համապատասխան մեթոդաբանության մշակում: Արդեն իսկ մշակվել է համապատասխան մեթոդիկայի նախագիծ, որը շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկումներից և արդյունքների ամփոփումից հետո կքննարկվի հանձնաժողովի նիստում: Մեթոդիկայով կամրագրվեն սպառողական խմբերի միջև ծախսերի բաշխման սկզբունքները և էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեխանիզմները, որի հիման վրա հաշվարկված սակագները հնարավորինս ճշգրիտ կարտացոլեն սպառողական խմբերի կողմից ծախսերի առաջացման պատճառները:

Նախատեսվում է նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեխանիզմի կատարելագործում: Մշակվել է համապատասխան մեթոդիկայի

նախագիծ, որը շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկումներից և արդյունքների ամփոփումից հետո կքննարկվի հանձնաժողովի նիստում:

Նախատեսվում է հաստատել խոշոր էլեկտրակայանների 2018 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները, որն իրականացվում է հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների 16-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում:

Նախատեսվում է վերանայել էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի և ծառայությունների մատուցման, էլեկտրաէներգիայի առուվաճառքի՝ արտադրող (հողմային էլեկտրակայաններ) – բաշխող, արտահանման նպատակով շուկայի մասնակիցների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչն ուղղված է նշված պայմանագրերի ձևերը էներգետիկայի ոլորտում նախատեսվող նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելուն:

Ներկայումս մշակվում է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, կառուցապատման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման, շահագործման և սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագիրը, որի շրջանակում մշակվել է նաև բաշխման ցանցին արտադրող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող - բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության սույն թվականի սեպտեմբերի 7-ի նիստով հավանության է արժանացել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումից հետո նախատեսվում է ողջ շուկայի կանոնների, այդ թվում նաև առևտրային կանոնների մաս կազմող պայմանագրերի օրինակելի ձևերի վերանայում, ուստի այդ պայմանագրերի օրինակելի ձևերի մշակմանը

հանձնաժողովը կանդրադառնա նախագծի ընդունումից հետո՝ այդ օրենքով նախատեսված ժամկետում:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ նախատեսվում է հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2018 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունների չափերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Նախատեսվում է լրամշակել էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, որի ընթացքում հաշվի կառնվեն ոլորտում առկա խնդիրները և բաժանորդների դիմում-բողոքները:

Նախատեսվում է իրականացնել էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից սպասարկման որակին վերաբերող տեղեկատվությունների հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն, ինչի նպատակն է ուսումնասիրել հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման ընթացակարգի առկայությունը, տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը, ինչպես նաև հավաքագրված և ամփոփված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը: Ուսումնասիրության վերջում նախապատրաստվելու են արձանագրություններ, որոնք հրապարակվելու են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N391Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների

2017 թվականի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանք: Մոնիթորինգի նպատակն է հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրությունն ու համապատասխանության գնահատումը հանձնաժողովի վերը նշված որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը փոփոխելու արդյունքում դրանում ամրագրված որոշ դրույթներով պայմանավորված նախատեսվում է մշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստեր հրավիրելու և անցկացնելու կարգի նախագիծը:

Նախատեսվում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայում: Ընկերությունը սակագնի վերանայման հայտը հանձնաժողով է ներկայացրել սույն թվականի օգոստոսի 7-ին, այն ընդունվել է ուսումնասիրության օգոստոսի 10-ին և ներկայումս գտնվում է ուսումնասիրության փուլում: Սակագնի վերանայման հայտը քննարկվելու է և որոշում է կայացվելու այն հանձնաժողով ներկայացնելու օրվանից հետո 80 աշխատանքային օրվա ընթացքում:

Կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները, ինչի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մատակարարների կողմից սպասարկման որակի ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

Նախատեսվում է եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող

ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչն անհրաժեշտ է նշված համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու համար:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: